

**ՆԵՂՈՒԹԵԱՆ ՊՍԱԿԸ**

Գոհուժիւն յայտնենք Աստուծոյ ամէն բանի մէջ. թէ՛ նեղութեան, թէ՛ հանգիստի, որովհետեւ երկուքն ալ օգտակար են արդարներուն եւ մեղաւորներուն համար: Պօղոս եւս, որուն ո՛չ ոք կրնար նմանիլ, նեղութեամբ անցուց իր կեանքը եւ որովհետեւ գայն շահ կը նկատէր եւ ո՛չ վնաս, անոր համար կ'ըսէ. «Ամէն անոնք, որոնք կ'ուզեն Քրիստոսով աստուածաշնորհութեամբ ապրիլ, պիտի հալածուին եւ նեղութիւն կրեն» (Բ. Տիմ. Գ.12): Արդարեւ, առաքիլներու նման գացող մարդը չի կրնար առանց վիշտի եւ նեղութեան ըլլալ:

Երբ Յոբ իր ժամանակ կ'ըսէր. «Մարդու կեանքը երկրի վրայ փորձութիւն է», ո՞րչափ աւելի է հիմա եւ կամ՝ ապագային: Կրնա՞յ մէկը պատերազմի մէջ ըլլալ եւ հանգիստ փնտռել: Արդ, քանի որ նեղութիւններն ու փորձութիւնները այս աշխարհի պատերազմներն են, հիմա հանգիստի ժամանակ չէ, այլ՝ քրտինքի: Ինչպէս, որ ըմբիշները նախ կը մերկանան, կ'օծուին եւ ապա կը կռուին, նոյնպէս դուն, որ Աւագանով մերկացար եւ լուսցւեցար ու միւռոնով օծուեցար, պէտք է կռուիս: Եթէ հանգիստ կը փնտռես, ինչո՞ւ մերկացար եւ կռուի պատրաստուեցար: Նեղութիւնը բոլորին համար է: Թէ՛ արդարները, թէ՛ մեղաւորները կը չարչարուին, սակայն տարբեր ձեւերով:

**ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ**

**ԾՈՒՍ ԵՒ ԾՆԱՍՏԵՐ**

Մեզ համար ծանօթ այս բառը, եկեղեցական շրջագիծէն ներս տարբեր իմաստ եւ նշանակութիւն ունի:


Համաձայն Մալխասեան բառարանին, ծուխ բառը այլ իմաստ մը եւս ունի: Կը նշանակէ տուն, յարկ, ընտանիք, որ ունի իր օճախը:

Այս հասկացողութեամբ, եկեղեցական բառագիտութեան մէջ ծուխ կը նշանակէ ընտանիք: Առ այդ իսկ, մենք կրնանք ըսել, (այսինչ) եկեղեցւոյ ծուխերը որոշեցին նոր եկեղեցի մը շինել:

Վերոյիշեալ օրինակին հետեւողութեամբ, եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ալ կը կոչուի ծխատէր քահանայ եւ համանուն եկեղեցւոյ հովանիին ներքեւ գործօն կրթական կառոյցը՝ ծխական դպրոց:

Միջին Արեւելի հայահոծ գաղութներուն մէջ, ուր ազգային-եկեղեցական կազմակերպեալ կեանքը խորրոխաժ է Ազգ. Սահմանադրութեան վրայ, անդամական դրութիւն գոյութիւն չունի, այլ՝ իւրաքանչիւր հայ ընտանիք ինքնին ծուխն է որոշեալ եկեղեցւոյ մը եւ ունի իր ծխատէր քահանան: Ծխային դրութիւնը կը սահմանուի Ազգային Առաջնորդարանի կողմէ:

Այսօր հրատապ հարց է, կեանքի ներկայ իրադարձութիւններուն մէջ, երբ աղանդաւորական շարժումներ կը փորձեն թափանցել հայ կեանքէն ներս եւ հաւատքի նոր վարդապետութիւններով նոր նամբաներ կը փորձեն բանալ մեր ժողովուրդին դիմաց, եկեղեցին եւ հոգեւոր հովիւները աջալուրջ կերպով պէտք է հաւատացեալներու ծուխը իրենց հոգատարութեան ներքեւ պահեն, որպէսզի անոնք գերծ մնան արտաքին թափանցումներէ եւ անփակտելիօրէն կապուած՝ իրենց Մայրենի եկեղեցւոյ:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՆՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԶԱՒԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022

ԹԻՒ 50

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**

Ես. 37.14-38: Բ. Թս. 1.1-12: Ղկ. 14.12-24

**ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԳՈՒԿԱՍՈՒԻ 14.12-24**

Ապա Յիսուս տանտիրոջ ըսաւ. «Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւեր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, որպէսզի չըլլայ, որ անոնք ալ քու հրաւերիդ փոխարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեւով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ՛ աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը, եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք քեզի փոխարէնը հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած եղիր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, ըսաւ Յիսուսի. «Երանի՛ անոր, որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»:

Յիսուս անոնց հետեւեալ առակը պատմեց. Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան դրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. «Եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է»: Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. «Ազարակ գնեցի. պէտք է երթամ եւ տեսնեմ գայն: Հետեւաբար կը խնդրեմ, որ ներողամիտ գտնուի»: Միւսը ըսաւ. «Հինգ գոյգ եզ գնեցի. պէտք է երթամ փորձեմ գանոնք: Հետեւաբար կը խնդրեմ, որ ներողամիտ գտնուի»: Ուրիշ մը ըսաւ. «Տակաւին նոր ամուսնացայ, հետեւաբար չեմ կրնար գալ»: Ծառան վերադարձաւ, եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված ըսաւ ծառային. «Անմիջապէս քաղաք գնա՛ եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղքատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հոս բեր»: Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. «Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ»: Տէրը ծառային հրամայեց. «Քաղաքէն դուրս գնա՛ եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ որու որ գտնես, ստիպէ՛ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը ինծի հետ ընթրիքի պիտի նստի»:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՍՐԲՈՑՆ՝ ՄԻՆԱՍԱՅ, ԵՐՄՈԳԻՆԵԱՅ,  
ԵՒԳՐԱՔՈՍԻ ԵՒ ԿԱՄԱՒՈՐ ԱՂՔԱՏԱՑՆ՝**

### **ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԱԼԵՔՍԻԱՆՈՍԻ Մինաս, Երմոգինես եւ Եւգրափոս վկաներ**

4-րդ դարուն, Մաքսիմիանոս կայսր իր իշխանութեան տակ գտնուող խոնվայոյց Ադեֆսանդրիա քաղաքը խաղաղացնելու համար կը դրկէ Մինաս անունով մարտասան եւ իմաստուն մարդ մը, որ իր առաջնութեան մէջ յաջողելով, կառավարիչ կը նշանակուի կայսրին կողմէ: Ան իր հետ Ադեֆսանդրիա կը տանի նոյնպէս իմաստուն իր քարտուղարը՝ Եւգրափոս անունով:

Մինաս գաղտնաբար ֆրիստոնեայ հաւատացեալ մըն էր, սակայն իր ցուցաբերած բարեկամութիւնն ու օգնութիւնը հանդէպ ֆրիստոնեաներուն առիթ կը հանդիսանան, որ Ադեֆսանդրիոյ մեծանուն հեթանոսները բացայայտեն անոր ֆրիստոնեութիւնը եւ կայսրին դիմելով գահընկեց ընեն զինք:

Կայսրը Մինասին տեղ Ադեֆսանդրիոյ կառավարիչ կը նշանակէ Երմոգինես անունով նոյնպէս Աթենացի, իմաստուն եւ մարտար մարդ մը, որ փոխարինելով Մինասը, յաճախ կը փորձէր ուրացութեան հրաւիրել նախկին կառավարիչը ու հեթանոսութեան դարձնել զայն: Ան նոյնիսկ կտրել կու տայ Մինասին լեզուն եւ աչքերը փորելով բանտ կը նետէ զայն, սակայն երբ յաջորդ օրը Մինաս հրաշքով բժշկուած դուրս կու գայ բանտէն, Երմոգինես կը գողայ եւ ինք եւս դարձի կու գայ ու ֆրիստոնեայ կը մկրտուի:

Այս լսելով կայսրը դատի կը կանչէ երկուքը, որոնց հետ նաեւ Եւգրափոս քարտուղարը: Երբեքն ալ չարչարանքներու կ'ենթարկուին եւ քաջաբար կը տոկան՝ պաշտպանելով իրենց հաւատքը: Ապա կայսրը չհանդուրժելով Եւգրափոսի անարգանքին, որ համարձակ կը խայտառակէր զինք իրենց ամուր հաւատքէն հրաժարեցնել չկարենալուն համար, նախ կը սպաննէ քարտուղարը եւ ապա կը գլխատէ Մինաս ու Երմոգինես վկաները, որոնք նահատակուելով Քրիստոսի անունին համար, արժանի կը դառնան Աստուծոյ Արքայութիւնը ժառանգելու:

#### **Յովհաննէս կամաւոր աղֆատ**

Յովհաննէս նգնաւորի կեանքին մասին երկու տարբերակներ կը ներկայացնեն վարձագիրները, Արեւելեան եւ Արեւմտեան: Ան տօնացոյցին անցած է երկու տարբեր անուններով, թէ՛ որպէս Գրեցի եւ թէ՛ որպէս Կամաւոր Աղֆատ:

Ըստ Արեւելեանին, եղած է Կեսարացի այրի մօր մը միակ զաւակը, ծագումով հայ կամ ասորի: Փոքր տարիքէն կը հեռանայ տունէն եւ ցամաք հորի մը մէջ մտնելով այնտեղ կը նգնի շուրջ տասը տարիներ, յաղթահարելով բոլոր տեսակի դժուարութիւնները: Այդ իսկ պատճառով, Յովհաննէս Արեւելեան տօնացոյցերուն մէջ նանչցուած է Գրեցի մակդիրով:

Իսկ ըստ Արեւմտեանին, եղած է Կ. Պոլսեցի եւ ապրած է 5-րդ դարու երկրորդ քառորդին: Կանուխ տարիքին գաղտնաբար կը հեռանայ տունէն եւ կը նգնի անապատի մը մէջ, ուր սակայն չդիմանալով ծնողի կարօտին, 6 տարիներ ետք կը վերադառնայ իր ծննդավայրը, բայց առանց ինքզինք յայտնելու ծնողի, իրենց տան մօտիկ բնակարանի մը մէջ կը նգնի 8 տարիներ: Մահուան սնարին մէջ ինքզինք կը յայտնէ ծնողին ցոյց տալով անոնցմէ ժառանգ մնացած Աստուածաշունչը: Այսպիսով կը վախճանի Ս. Յովհաննէս, առնելով «Խրեթարնակ» մակդիրը Արեւմտեան եկեղեցիներու մէջ:

## Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

### **ՔՐԻՍՏՈՍԻ ԽՕՍՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ**

Ձեր ուշադրութիւնը պիտի ուզեմ հրաւիրել Մտք. 17.18-ին մէջ եղող բանի մը վրայ: Այդ բանն է՝ «սաստեց»: «Սաստեց» չար ոգին: Յիսուս չար ոգին դուրս հանելու համար պատանիէն՝ չկռուեցաւ անոր դէմ, այլ՝ պարզապէս բացաւ իր բերանը եւ արտասանեց ազատագրութիւն բերող իր խօսքը: Ան իր խօսքով սաստեց չար ոգին, ճիշդ ինչպէս իր խօսքով սաստեց փոթորկած ծովը, կամ իր խօսքով տիեզերքը գոյութեան բերաւ:

### **ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ**

Քրիստոսի խօսքին զօրութեան դիմաց՝ Մատանաները իսկոյն կը փախչին: Եւ ոչ միայն կը փախչին, այլէ՛ կը սպաննուին: Յայտնութիւն 19.21-ին մէջ կը կարդանք, որ «զազանին զօրքերը սպաննուեցան ձիուն վրայ հեծեալին սուրով, որ կ'ելլէր անոր բերանէն»: Գազանը՝ Նեոն է, հեծեալը՝ Քրիստոս, հեծեալին բերանէն ելլող սուրը՝ Քրիստոսի խօսքը: Մերտենք Աստուածաշունչը, որպէսզի Քրիստոսի խօսքին սուրով զինուինք: Այդ Սուրին դիմաց, ոչ Մատանան եւ ոչ ալ սատանայութիւն ընող մարդիկ կրնան դէմ դնել:

## ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

### **ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒԳ ՊԱՏԱՍՄԱՆԱՆԸ ԿԸ ՓՆՏՆՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ՝ Կարդա՛ր ՍԱՂՄՈՍ 48**

Մեծ է Տէրը, մեր Աստուածը, եւ ամէն օրհնութեան արժանի՝ իր քաղաքին մէջ, իր սուրբ լեռան վրայ: Իր բարձրութեամբ գեղեցիկ է, ամբողջ աշխարհի ուրախութիւնն է Սիոն լեռը, Աստուծոյ բնակավայրը, մեծ Թագաւորին քաղաքը: Աստուած ներկայ է անոր ամրութիւններուն մէջ, եւ ցոյց տուած է, թէ ի՛նքն է իրաւ ամրոցը:

Ահա թագաւորները հաւաքուեցան, եւ միասնաբար յարձակեցան քաղաքին վրայ, բայց երբ զայն տեսան՝ ապշեցան, զարհուրեցան եւ փախուստի դիմեցին: Դողը բռնեց զիրենք, ինչպէս երկունքը կը բռնէ ծննդական կինը, կամ ինչպէս որ արեւելքէն փչող հովը կը խորտակէ Թարշիշէն եկող նաւերը: Ինչ որ լսեք էինք՝ այժմ մեր աչքերով տեսանք Ամենակալ Տիրոջ քաղաքին մէջ, մեր Աստուծոյն քաղաքին մէջ: Աստուած կանգուն պիտի պահէ զայն յաւիտեան: Քու տաճարիդ մէջ, ո՛վ Աստուած, մենք մշտական հոգածութեանդ մասին կը խորհինք: Քու անունդ, ո՛վ Աստուած ծանօթ է աշխարհի չորս ծագերուն, եւ բոլորը քեզ կ'օրհերգեն: Արդար են գործերդ: Թող ուրախանայ Սիոն լեռը, թող ցնծա՛ն Յուդայի քաղաքները, արդար դատաստաններուդ համար:

### **ԱՂՕԹՔՆԸ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ**